ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի

2017թ. ապրիլի 11-ի արձանագրությամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի

2017թ. մայիսի 27-ի թիվ 1 որոշմամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ նախագահ
Ա. Չիտչյան

# ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
# ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

**2017թ.**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Սույն կարգը մշակվել է ՀՀ օրենսդրության՝ մասնավորապես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի, «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) կանոնադրության և ներքին իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

1.2.Սույն Կարգը կարգավորում է «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ խորհրդի (այսուհետ նաև՝ Դիտորդ խորհուրդ) գործունեությունը:

1.3.Դիտորդ խորհուրդը հանդիսանում է Կազմակերպության մշտական գործող՝ կոլեգիալ կառավարման մարմին:

1.4.Մինչև Դիտորդ խորհրդի ընտրվելը, Դիտորդ խորհրդի լիազորությունները իրականացվում են Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից:

1.5.Իր գործունեությունն իրականացնելիս Դիտորդ խորհուրդը առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով:

## 2. ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1.Դիտորդ խորհուրդը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ 5 տարի ժամկետով: Այն դեպքերում, երբ սահմանված ժամկետի ավարտից հետո նոր Դիտորդ խորհուրդ չի ընտրվում, գործող Դիտորդ խորհրդի իրավասությունները չեն դադարում մինչև նոր կազմով Դիտորդ խորհրդի ընտրվելը:

Դիտորդ խորհրդի նույն կազմը կարող է անընդմեջ վերընտրվել անսահմանափակ անգամ:

2.2.Դիտորդ խորհրդի կազմը բաղկացած է Կազմակերպության 7 անդամից:

2.3.Դիտորդ խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է հետևյալ կարգով.

Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի առաջադրել իր կամ Կազմակերպության մեկ այլ անդամի թեկնածությունը: Թեկնածությունները առաջադրվում են ժողովի մասնակիցների կողմից՝ Ընդհանուր ժողովի ընթացքում:

Առաջադրված թեկնածուն իրավունք ունի ինքնաբացարկ հայտնել:

2.4.Դիտորդ խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է փակ գաղտնի քվեարկության միջոցով:

2.5.Դիտորդ խորհրդի անդամները ընտրվելուց հետո՝ Խորհրդի կազմից ընտրում են Դիտորդ խորհրդի նախագահին: Դիտորդ խորհրդի նախագահ ընտրվելու համար խորհրդի անդամներից յուրաքանչյուրը իրավունք ունի առաջադրելու իր թեկնածությունը, ինչպես նաև իր նախընտրած անդամի թեկնածությունը:

2.6.Խորհրդի նախագահն ընտրվում է 5 տարի ժամկետով, Դիտորդ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և կարող է անընդմեջ վերընտրվել անսահմանափակ անգամ:

Դիտորդ խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է բաց քվեարկության եղանակով, Դիտորդ խորհրդի նիստում:

2.7.Դիտորդ խորհրդի նախագահի թեկնածուին առաջադրվող պահանջներն են՝

- բարձրագույն կրթություն,
- ինքնակարգավորվող կազմակերպությունում որպես կառավարչի առնվազն տաս տարվա աշխատանքային փորձ և որպես կառավարիչ մասնակցություն ոչ պակաս, քան տաս սնանկության վարույթներին,
- որակազրկման, տնտեսական բնույթի հանցագործությունների, ինչպես նաև առանձնապես ծանր, ծանր և միջին ծանրության հանցագործությունների համար դատվածության բացակայություն:

2.8.Դիտորդ խորհրդի նախագահն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) հրավիրում է Դիտորդ խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
2) սահմանում է նիստերի անցկացման կարգը և օրակարգի հարցերը,

3) կազմակերպում է Դիտորդ խորհրդի նիստում առաջադրված հարցերի քննարկումը, Կազմակերպության անդամների միջև տեղեկատվության փոխանակումը,
4) առաջադրում է Գործադիր տնօրենի թեկնածությունը, սահմանում է Դիտորդ խորհրդի անդամների իրավասությունների շրջանակը,
5) սնանկության վերաբերյալ գործեր քննող ՀՀ դատարաններին ներկայացնում է վիճակահանության արդյունքում ընտրված կառավարիչների թեկնածությունը՝ կառավարիչ նշանակելու համար,
6) վերահսկում է Ընդհանուր ժողովի և Դիտորդ խորհրդի կողմից կայացված որոշումների կատարումը,
7) նշանակում է Դիտորդ խորհրդի քարտուղար Կազմակերպության աշխատակազմից,
8) իրականացնում է այլ գործառույթներ, որոնք նախատեսված են Ընդհանուր ժողովի, Դիտորդ խորհրդի որոշումներով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով:

2.9.Դիտորդ խորհրդի անդամը կարող է կամավոր հրաժարվել իր պարտականությունների կատարումից, այդ մասին գրավոր տեղեկացնելով Դիտորդ խորհրդի նախագահին:

2.10.Դիտորդ խորհրդի նախագահը կարող է կամավոր հրաժարվել իր պարտականությունների կատարումից, այդ մասին գրավոր տեղեկացնելով Դիտորդ խորհրդին, նման դեպքում Դիտորդ խորհրդի կազմից ընտրվում է նոր նախագահ:

2.11.Դիտորդ խորհրդի նախագահի առաջարկով Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

- եթե վերջինս անհարգելի պատճառներով բացակայել է Խորհրդի մի քանի նիստերից,
- իր գործողություններով կամ անգործությամբ կոպտորեն խախտել է Կազմակերպության անդամների իրավունքներն ու օրինական շահերը:

2.12.Դիտոդ խորհրդի բոլոր անդամների կամ նրա առանձին անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել արտահերթ Ընդհանուր

ժողովի որոշմամբ, որն ընդունվում է Կազմակերպության բոլոր անդամների ձայների 3/4-ով:

2.13.Դիտորդ խորհրդի անդամի կամավոր հրաժարվելու, լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու կամ վերջինիս մահվան դեպքում, նրա տեղը զբաղեցնում է Դիտորդ խորհրդի ընտրությունների ժամանակ ամենաշատ ձայներ հավաքած, սակայն չընտրված թեկնածուն:

## 3. ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1.Դիտորդ խորհրդի իրավասությունները ծագում են Ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու և դրա վերաբերյալ տվյալները հրապարակելու պահից:

3.2.Դիտորդ խորհրդի իրավասությունները դադարում են նոր Դիտորդ խորհրդի ընտրվելու պահից:

3.3.Որոշումներ կայացնելիս Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Դիտորդ խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

3.4.Դիտորդ խորհրդի անդամը լիազորագրի հիման վրա կարող է փոխանցել իր ձայնի իրավունքը մեկ այլ անդամի: Տրված լիազորագիրը վավերացվում է Դիտորդ խորհրդի նախագահի ստորագրությամբ և կազմակերպության կնիքով:

3.5.Դիտորդ խորհրդի իրավասություններն են՝

1) ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպությանն անդամակցելու և անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումներ կայացնելը,
2) Կազմակերպության ֆինանսական գործունեությունը և հաշվապահական հաշվառումը վերահսկելու համար աուդիտորական ծառայություններից օգտվելու առաջարկության ներկայացումը,

3) Գործադիր տնօրենի ընտրությունը,

4) Հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը,

5) 65 տարին լրացած կառավարչի դիմումի հիման վրա, վերջինիս լիազորությունների դադարեցման կամ շարունակելու վերաբերյալ որոշում կայացնելը, կառավարչի կողմից նման դիմումը պետք է ներկայացվի 65 տարին լրանալուց առնվազն 30 օր առաջ,

6) Գործադիր տնօրենի հաշվետվությունների հաստատումը,

7) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունների վերաբերյալ որոշումների ընդունումը,

8) Կազմակերպության անդամների կողմից իրենց գործունեության վերաբերյալ ներկայացված տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և պահպանումը,

9) Կազմակերպության ներկայացուցչությունների և այլ ստորաբաժանումների հիմնադրումը,

10) Կազմակերպության տնտեսական գործունեության կամ ցանկացած հարցի վերաբերյալ որոշման հաստատումը, բացառությամբ Ընդհանուր ժողովի իրավասությանը ենթակա գործառույթների,

11) Կազմակերպության տարեկան բյուջեի հաստատումը, դրանում փոփոխությունների կատարումը, տարեկան հաշվետվությունների հաստատումը,

12) կառավարչին կամ այլ անձի կազմակերպության պատվավոր անդամի կոչում շնորհելը,

13) կանոնադրությամբ նախատեսված իր իրավասությունների շրջանակներում այլ հարցերի քննարկումը և լուծումը:

3.6.Դիտորդ խորհուրդը կարող է որոշում կայացնել Կազմակերպության անդամի անդամակցության դադարեցման վերաբերյալ հետևյալ դեպքերում՝

- կառավարիչը դիմել է այդ մասին,

- լրացել է նրա 65 տարին (պաշտոնավարման տարիքը), բացառությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կանոնադրության 4.14. և սույն կարգի 3.9. կետերով նախատեսված դեպքերի
- իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է սնանկության գործով կառավարչի գործունեության հետ անհամատեղելի այլ աշխատանքի,
- ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան վեց ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ մեղադրական դատավճիռը, որով անձը դատապարտվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, կամ նա դատվածություն ունի պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
- դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել պարտապանի ֆինանսական առողջացմամբ,
- կառավարիչը թույլ է տվել կառավարչի՝ օրենքով սահմանված պարտականությունների կոպիտ կամ պարբերական խախտումներ: Կոպիտ է համարվում այն խախտումը, որն անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ: Պարբերական է այն խախտումը, որը առանձին վերցրած, թեև կոպիտ խախտում չի համարվում, սակայն իր պարբերականությամբ անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ:

3.7.Եթե կառավարիչը սնանկության գործով կառավարչի որակավորում ստացել է օրենքի պահանջների խախտմամբ, ապա կառավարչի լիազորությունները դադարեցվում են ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ խորհրդի եզրակացության հիման վրա: Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

3.8.Լիազորությունները դադարեցված կառավարիչը պարտավոր է ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում իր մոտ պահպանվող՝ ընթացիկ սնանկության գործերով փաստաթղթերը և նյութերը հանձնել կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազորված անձին:

3.9.Սնանկության գործերով կառավարչի գործունեությամբ զբաղվելու պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ խորհուրդը, հիմք ընդունելով կառավարչի՝ իր պարտականությունների կատարման ունակությունները և կարողությունները, կարող է որոշել թույլատրել կառավարչին մինչև հինգ տարի ժամկետով շարունակել զբաղվել սնանկության գործերով կառավարչի գործունեությամբ:

3.10.Եթե կառավարիչը պատշաճ ծանուցված է եղել և չի մասնակցում Դիտորդ խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է նրա անդամակցության դադարեցման հարցը, ապա դա արգելք չէ, որպեսզի վերջինիս նկատմամբ կայացվի անդամակցության դադարեցման վերջնական որոշում:

## 4. ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ և ԱՆՑԿԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1.Դիտորդ խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը հրավիրվում են Դիտորդ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն 2/5-ի պահանջով:

4.2.Դիտորդ խորհրդի նախագահը նախագահում է խորհրդի նիստերը, իսկ նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները փոխանցվում են խորհրդի ամենատարեց անդամին:

Խորհրդի նիստերի անցկացման կարգը նախագահի կողմից սահմանվում է ինքնուրույն, համաձայն Կազմակերպության կողմից հաստատված ներքին իրավական փաստաթղթերով հաստատված դրույթների:

4.3.Դիտորդ խորհրդի նախագահը հաշվետու է Ընդհանուր ժողովին:

4.4.Դիտորդ խորհրդը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են բոլոր անդամները կամ լիազորագրի հիման վրա հանդես եկող նրանց ներկայացուցիչները, սակայն նիստին պետք է մասնակցի առնվազն հինգ անդամ:

4.5.Կառավարչի անդամակցության դադարեցման հարցը քննարկելու համար հրավիրված Դիտորդ Խորհուրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են Դիտորդ Խորհուրդի բոլոր անդամները:

4.6.Եթե կառավարիչը պատշաճ ծանուցված է եղել և չի մասնակցում Դիտորդ խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է նրա անդամակցության դադարեցման հարցը, ապա դա արգելք չէ, որպեսզի վերջինիս նկատմամբ կայացվի անդամակցության դադարեցման վերջնական որոշում:

4.7.Կառավարչի անդամակցության դադարեցման վերաբերյալ՝ որոշումը կայացվում է Դիտորդ խորհրդի անդամների առնվազն հինգ ձայնով:

4.8.Սահմանված կարգով Դիտորդ խորհրդի նիստեր հրավիրելուց Գործադիր տնօրենը Դիտորդ խորհրդի բոլոր անդամներին և անհրաժեշտության դեպքում՝ հրավիրված անձանց, պատշաճ կարգով ծանուցում է նիստերի անցկացման վերաբերյալ:

4.9.Նիստերի վերաբերյալ ծանուցումը, ինչպես նաև օրակարգում քննարկվելիք հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային փոստի կամ օրենքով չարգելված հաղորդակցության այլ միջոցների գործադրմամբ, ուղարկվում է Դիտորդ խորհրդի անդամներին և հրավիրված անձանց՝ նիստի կայացման օրվանից հինգ օր առաջ:

Ծանուցման մեջ պետք է հստակ նշվեն՝

- նիստի անցկացման օրը, ժամը և վայրը,
- օրակարգում ընդգրկված հարցերը,
- այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրակարգի վերաբերյալ իրենց առաջարկները և դիտողությունները Խորհրդի անդամները կարող են ներկայացնել Խորհրդի նախագահին ծանուցման պահից երեք օրվա ընթացքում:

4.10.Դիտորդ խորհրդի նիստերի քարտուղարը նշանակվում է Դիտորդ խորհրդի նախագահի կողմից՝ Կազմակերպության աշխատակազմից:

4.11.Դիտորդ խորհրդի նիստերը իրականացվում են հետևյալ ընթացակարգով՝

4.11.1.Նիստի բացումից հետո Դիտորդ խորհրդի նախագահը ամփոփում է ներկա գտնվող անդամների գրանցման արդյունքները, քվորումի առկայության դեպքում հայտարարում է Դիտորդ խորհրդի նիստի բացման մասին և առաջարկում է հաստատել օրակարգը:

4.11.2.Դիտորդ խորհրդի նիստի օրակարգը հաստատվում է քվեարկության միջոցով՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.11.3.Օրակարգը հաստատելուց հետո Դիտորդ խորհրդի նախագահը առաջարկում է լսել զեկուցողներին:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է քվեարկության միջոցով և ընդունվում է ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

## 5.ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1.Դիտորդ խորհրդի նիստերի վերաբերյալ քարտուղարը կազմում է արձանագրություն: Արձանագրության մեջ ներառվում են նաև քննարկվող հարցերի վերաբերյալ Դիտորդ խորհրդի անդամների դիտողությունները և առաջարկությունները:

5.2. Դիտորդ խորհրդի նիստի արձանագրության մեջ պետք է նշվեն՝

- նիստի օրը, վայրը և ժամանակը,
- նիստին մասնակցող անդամների տվյալները,
- նիստի օրակարգը,
- քվեարկության դրված հարցերը և դրանց քվեարկության արդյունքները,
- ընդունված որոշումները:

5.3.Նիստի արձանագրությունը եռօրյա ժամկետում ստորագրվում է նիստի քարտուղարի և Դիտորդ խորհրդի նախագահի կողմից:

5.4.Դիտորդ խորհրդի նիստի արձանագրությունները կազմվում են մեկ օրինակով և պահպանվում է Գործադիր տնօրենի մոտ՝ անժամկետ:

5.5.Կազմակերպության անդամի վերաբերյալ կայացված որոշումները տաս օրվա ընթացքում՝ Գործադիր տնօրենի կողմից պետք է տեղադրվեն Կազմակերպության պաշտոնական կայքում:

5.6.Կազմակերպության անդամները իրավունք ունեն Գործադիր տնօրենից պահանջել և եռօրյա ժամկետում ստանալ Դիտորդ խորհրդի որոշումը կամ դրա քաղվածքը, որը ստորագրվում և կնքվում է Գործադիր տնօրենի կողմից:

5.7.Դիտորդ խորհրդի կողմից նոր Գործադիր տնօրեն ընտրելու դեպքում նախկինը պարտավոր է նրան հանձնել իր տրամադրության տակ գտնվող բոլոր փաստաթղթերը:

## 6.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Սույն Կարգը ուժի մեջ է մտնում և սկսում է գործել Ընդհանուր ժողովի կողմից հաստատելու պահից:

6.2.Սույն Կարգում բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

6.3.Սույն Կարգով նախատեսված բոլոր իրավական կարգավորումները համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը, Կազմակերպության կանոնադրությանը և ներքին իրավական փաստաթղթերին:

6.4.Այն իրավական հարցերի կարգավորումը, որոնք նախատեսված չեն սույն Կարգով կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով սահմանված կարգով:

## ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտոդ խորհուրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քվեարկության համար

Հարց 1.

_____

_____

Որոշեցին՝

_____

_____

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|

*(նշեք ձեր տարբերակը)*

Հարց 2.

_____

_____

Որոշեցին՝

_____

_____

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|

*(նշեք ձեր տարբերակը)*

«___» _____ 20___ թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ի անդամ

_____/_____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

ԱՌԱՆՑ ՔՎԵԱՐԿՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԱՆՎԱՎԵՐ

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտող խորհուրդի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

ք. Երևան « » _____20 թ.

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

Քվորումը ապահովված է – 100 տոկոս, Դիտորդ խորհրդի նիստը իրավազոր է:

Նիստին մասնակցում են հետևյալ հրավիրված անձինք՝

1. _____
2. _____

Նիստի օրակարգը՝

1. _____
2. _____

Օրակարգում ընդգրկված առաջին հարցի շուրջ՝ «_____» ելույթ ունեցավ՝

_____

**Որոշեցին՝**

---

Քվեարկության արդյունքները՝
Կողմ՝ ____
Դեմ՝ ____
Չեռնպահ՝ _____
Որոշումը ընդունված է միաձայն:
Որոշումը ընդունված է ձայների մեծամասնությամբ:
Որոշումը ընդունված չէ:

Օրակարգում ընդգրկված երկրորդ հարցի շուրջ՝ «_____»
Ելույթ ունեցավ՝ _____

**Որոշեցին՝**

---

<u>Քվեարկության արդյունքները՝</u>
Կողմ՝ ____
Դեմ՝ ____
Չեռնպահ՝ _____
Որոշումը ընդունված է միաձայն:
Որոշումը ընդունված է ձայների մեծամասնությամբ:
Որոշումը ընդունված չէ:

**Դիտորդ խորհրդի նախագահ՝** **Ա.Չիտչյան**

**Նիստի քարտուղար՝** /_____/